մեանս փոխանակէին գրել զոր ասէր, եւ եօթն եւս ընդ օրինակէին զնոտարացի նշանակեալսն։ Այլ բազումք 'ի գրոց անտի նորա այժմ չերեւին 'ի միջի։

Ի բովանդակ մատենագրութիւնս Որոգինեայ գտան բազում ուրեք մոլար վարդապետութիւնք ընդդէմ ուղիղ հաւատոյ. ոմանք համարեցան զայնս մուծեալ յետոյ 'ի թշնամեաց իւրոց. իսկ այլք ոմանք համարձակեցան ասել, թէ այնոքիկ մոլորութիւնք արդիւնք մտաց և արտադրութիւնք գրչի նորին իսկ Որոգինեայ են. եւ այսպէս բազումք 'ի բազում կարծիս բաժանեցան, և զկնի ժամանակաց յուզեցան բազում խռովութիւնք և չփոթութիւնք վասն գրոց նորին 'ի մէջ կրօնաւորացն Երուսաղէմի. մինչզի տիեզերական ժողովով վճարել զիրսն, զոր տեսցուք յիւրում տեղւոջ։

Իսկ Վաղերիանոս նպաստաւոր եղոյց զինքն քրիստոնէից, այլ մոլորեալ 'ի բանս Մակրիանոսի նորոգեաց ըզհերձանոսութիւնն և արգել քրիստոնէից ժողովել 'ի դերեզմանս մարտիրոսաց։ Ս. Ստեփանոս եպիսկոպոս Հռոմայ մեռաւ 'ի բանտի, Դիոնիսիոս եպիսկոպոս Աղէքսանդրիայ աքսորեցաւ 'ի Լիբիա, որ երեւելին էր 'ի մատենագիրս ժամանակին եւ գրեաց զյոլով թուղթս 'ի վերայ այլ և այլ խնդրոց ուղղեալ առ եպիսկոպոսունս, առ Փափիոս եպիսկոպոս Անտիոքայ, առ Մեհրուժան եպիսկոպոս Հայոց վասն վկայութեան սրբոց եւ առ Նովատիոս երէց Հռոմայ՝ որ մոլորեալն էր 'ի հաւատոց, որոյ վասն ժողովեցան 60 Եպիսկոպոսունք 'ի Հռոմ, եւ դատապարտեցին զՆովատիոս և զաղանդ նորին, որպէս յայտ առնէ Եւսեբի յԵկեղեցական պատմութեան։ Ցաւուրս Աւրիլիա խաղաղացաւ եկեղեցին. հրաման ետ եպիսկոպոսաց համարձակ ունել զօրէնս եւ առնուլ զտեղին Մարտիրոսաց. (269)։ Ի ժամանակի խաղաղութեանս այսմիկ հանդեաւ եպիսկոպոսն Երուսաղէմի Մազրանոս, եւ փոխանակ նորա եկաց եպիսկոպոս Հիմենոս։ Սա փառաւորեցաւ ասէ Եւսեբի, յաւուրս մեր ամս բազումս։

Պօղոս Սամոստացի եպիսկոպոս Անտիոք քաղաքի, վարժ յուսումն գրոց, այլ աշխարհասէր և փառասէր, խափանեաց զերգսն Քրիստոսի եւ ընդ այնր տայր նուագել